ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1-32/24-I/INSTLING

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան 29 հունվարի 2024թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան (այսուհետ՝ Ակադեմիա), ի դեմս նախագահ Աշոտ Սերոբի Սաղյանի, որը գործում է Ակադեմիայի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ «Հ.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ» ՊՈԱԿը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն Վիկտոր Լիպարիտի Կատվալյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պայմանագրով Ակադեմիան պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեով նախատեսված 196 571 728 ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, ակնկալվող գիտական արդյունքները՝ դրանց որակական և քանակական ցուցանիշները, նախահաշիվը, կատարողների մասին տեղեկությունները, Ծրագրի առաջադրանքը և օրացուցային պլանը ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Ակադեմիան իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 Ակադեմիայի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 Ակադեմիայի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 Ակադեմիան պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը Ակադեմիա հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել Ակադեմիայի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Ակադեմիա,

2.4.6 Ակադեմիա ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում Ակադեմիա ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում Ակադեմիայի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո Ակադեմիա ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Ակադեմիայի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2024 թվականի դեկտեմբերի 20-ը:

3. Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 196 571 728 ՀՀ դրամ:

4. Մշտադիտարկում

4.1 Ակադեմիան ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մշտադիտարկում՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մշտադիտարկումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1 Ակադեմիան Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 Ակադեմիան Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6. Կողմերի պատասխանատվությունը

Կողմերը Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրում են պատասխանատվություն՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Ակադեմիա ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Ակադեմիա	**Կազմակերպություն**
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	ՀՀ ԳԱԱ «Հ.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ» ՊՈԱԿ

ք. Երևան, Մ. Բաղրամյան 24 Հ/հ՝ 900011024115 ՀՎՀՀ՝ 00005673 ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան	Երևան, Կենտրոն, Գր.Լուսավորիչի փողոց 15 Հ/հ՝ 900018005489 ՀՎՀՀ՝ 01505307 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Նախագահ՝	Կազմակերպության տնօրեն՝
(ստորագրություն)	(ստորագրություն)
ԱՇՈՏ ՍԵՐՈԲԻ ՍԱՂՅԱՆ	Վիկտոր Լիպարիտի Կատվալյան
Կ. Տ.	Կ. Տ.

Ծրագրի գիտական ղեկավար՝ (ստորագրություն) Կատվալյան Վիկտոր Լիպարիտի

Հավելված 1
29 հունվարի 2024թ.
N 1-32/24-I/INSTLING պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, Ակադեմիայի նախագահ Աշոտ Սերոբի Սաղյանը և Կազմակերպության տնօրեն Վիկտոր Լիպարիտի Կատվալյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել 29 հունվարի 2024թ. N 1-32/24-I/INSTLING պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 196 571 728 ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

Ակադեմիա	**Կազմակերպություն**
Նախագահ՝	տնօրեն՝
(ստորագրություն)	(ստորագրություն)
ԱՇՈՏ ՍԵՐՈԲԻ ՍԱՂՅԱՆ	Վիկտոր Լիպարիտի Կատվալյան
Կ. Տ.	Կ. Տ.

Հավելված 2
29 հունվարի 2024թ.
N 1-32/24-I/INSTLING պայմանագրի

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

Ակնկալվող արդյունք	Քանակ
ԱԳ (ազդեցության գործակից) ունեցող պարբերականներում հոդվածներ՝ ըստ «Institute for Scientific Information (ISI JCR)»-ի տվյալների՝	5
ԱԳ չունեցող, բայց Scopus գիտատեղեկատվական շտեմարանում ներառված պարբերականներում հոդվածներ՝	5
ՀՀ ԲՈԿ ցանկում ներառված պարբերականներում հոդվածներ՝	30
Այլ պարբերականներում հոդվածներ/հոդված ժողովածուի մեջ՝	50
Book Citation Index հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում հրատարակված մենագրություններ, գրքեր, հոդվածներ՝	0
Գրքեր, մենագրություններ՝	15
Գիտաժողովի նյութեր՝	5
Արտոնագրեր՝	0

Կազմակերպության տնօրեն՝ _____ (ստորագրություն) Վիկտոր Լիպարիտի Կատվալյան

Կազմակերպության գիտքարտուղար՝ _____ (ստորագրություն) Մխիթարյան Գայանե Մելիսի

Կ. Տ.

Հավելված 3
29 հունվարի 2024թ.
N 1-32/24-I/INSTLING պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

ՀՀ դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման չափը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1.	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	190 602 444	38 120 488	47 650 611	47 650 611	57 180 734
2.	տնտեսական ծախսեր՝	2 669 284	533 856	667 321	667 321	800 786
3.	այլ ծախսեր՝	3 300 000	660 000	825 000	825 000	990 000
Ընդամենը՝		196 571 728	39 314 344	49 142 932	49 142 932	58 971 520

Կազմակերպության տնօրեն՝ _____ (ստորագրություն) Վիկտոր Լիպարիտի Կատվայան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ (ստորագրություն) Սոնա Վարդգեսի Սոլակյան

Կ. Տ.

Հավելված 3.1
29 հունվարի 2024թ.
N 1-32/24-I/INSTLING պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

ՀՀ դրամ

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը
	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	**2 669 284**
1.	*էլեկտրաէներգիայի ծառայություն*	1 609 284
2.	*գազի ծառայություն*	0
3.	*ջրամատակարարման ծառայություն*	300 000
4.	*կապի ծառայություն*	0
5.	*աղբահանություն*	700 000
6.	դեռատիզացիա	60 000
	Այլ ծախսեր, այդ թվում՝	**3 300 000**
1.	Սարք սարքավորում	1 200 000
2.	Հրատարակման ծախս	1 200 000
3.	Այլ ծախսեր	900 000

Կազմակերպության տնօրեն՝ _____ (ստորագրություն) Վիկտոր Լիպարիտի Կատվալյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ (ստորագրություն) Սոնա Վարդգեսի Սոլակյան

Կ. S.

Հավելված 4
29 հունվարի 2024թ.
N 1-32/24-I/INSTLING պայմանագրի

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ
«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

A - ամսական աշխատավարձ (ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները)

B - ամիսների քանակ

C - աշխատաժամանակի ռեժիմ

D - աշխատաժամանակի շաբաթական տևողություն (ժամ)

E - գումարային

<< դրամ

ազգանուն անուն հայրանուն	պաշտոն	A	B	C	D	E
Վարչասպասարկող անձնակազմ						
Կատվալյան Վիկտոր Լիպարիտի	տնօրեն	500 000	12	հիմնական	40	6 000 000
Հովհաննիսյան Նազիկ Գարրիի	գիտության գծով փոխտնօրեն	400 000	12	հիմնական	40	4 800 000
Հովհաննիսյան Լավրենտի Շահենի	տնօրենի խորհրդական	60 000	12	ներքին համատեղություն	20	720 000
Մխիթարյան Գայանե Մելիսի	գիտական քարտուղար	350 000	12	հիմնական	40	4 200 000
Սոլակյան Սոնա Վարդգեսի	հաշվապահ	200 000	12	համատեղություն	20	2 400 000
Բաղալյան Մարինե Միքայելի	գործավար-արխիվարիուս, կադրերի տեսուչ (մասնագետ)	220 000	12	հիմնական	40	2 640 000
Հարությունյան Էմմա Աղասու	գրադարանի վարիչ	120 000	12	հիմնական	40	1 440 000
Արևշատյան Սևակ Սուրիկի	հասարակայնության հետ կապերի և էլ.կայքի պատասխանատու	106 000	12	հիմնական	40	1 272 000
Գրիգորյան Վազգեն Սերոբի	տնտեսվար	96 700	12	հիմնական	40	1 160 400
Առուստամյան Բենիամին Սլավիկի	վարորդ, ցրիչ	168 000	12	հիմնական	40	2 016 000
Բարսեղյան Անահիտ Մարտիկի	պահակ	134 000	12	հիմնական	40	1 608 000
Համբարձումյան Անահիտ Հրաչիկի	հավաքարար	96 700	12	հիմնական	40	1 160 400
Խաչատրյան Լուսինե Մնացականի	հավաքարար	106 000	12	հիմնական	40	1 272 000
Գիտական անձնակազմ						
Բաժին Արդի հայերեն, բաժնի վարիչ՝ Թ. Ասոյան						
Ասոյան Թաթուլ Արտիկի	Ղեկավար	224 876	12	համատեղություն	20	2 698 512
Պապիկյան Սիլվա Վարդանի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Բարսեղյան Ամալյա Գալուստի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Թելյան Լեոնիդ Գուրգենի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Մինասյան Շողեր Մառլեստի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Սուքիասյան Հենրիետա Վահրամի	Ավագ գիտաշխատող	150 138	12	համատեղություն	20	1 801 656
Ներսիսյան Վարսիկ Արմենի	Ավագ գիտաշխատող	150 138	12	համատեղություն	20	1 801 656
Առաքելյան Կարինե Լևոնի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312

Ղամոյան Լուսինե Աշոտի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Համբարյան Լուսինե Արսենի	Կրտսեր գիտաշխատող	89 950	12	հիմնական	20	1 079 400
Բաժին Հայոց լեզվի պատմություն, բաժնի վարիչ՝ Գ.Մխիթարյան						
Մխիթարյան Գայանե Մելիսի	Ղեկավար	224 876	12	ներքին համատեղություն	20	2 698 512
Հովհաննիսյան Լավրենտի Շահենի	Գլխավոր գիտաշխատող	500 018	12	հիմնական	40	6 000 216
Հովհաննիսյան Նազիկ Գարրիի	Ավագ գիտաշխատող	150 138	12	ներքին համատեղություն	20	1 801 656
Գրիգորյան Սուսաննա Մակարի	Ավագ գիտաշխատող	150 138	12	համատեղություն	20	1 801 656
Թադևոսյան Հասմիկ Միխայիլի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Խաչատրյան Վալենտին Մեխակի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Սիրունյան Տիգրան Ղուկասի	Ավագ գիտաշխատող	150 138	12	համատեղություն	20	1 801 656
Թորոսյան Հռիփսիմե Վահեի	Կրտսեր գիտաշխատող	89 950	12	համատեղություն	20	1 079 400
Բաժին Բարբառագիտություն, բաժնի վարիչ՝ Վ. Կատվալյան						
Կատվալյան Վիկտոր Լիպարիտի	Ղեկավար	224 876	12	ներքին համատեղություն	20	2 698 512
Գևորգյան Գայանե Գերասիմի	Առաջատար գիտաշխատող	209 995	12	համատեղություն	20	2 519 940
Մեսրոպյան Հայկանուշ Հովսեփի	Առաջատար գիտաշխատող	419 989	12	հիմնական	40	5 039 868
Բառնասյան Ջեմմա Աղվանի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Վարդանյան Արտակ Վարդանի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Սարգսյան Արմեն Յուրիկի՝	Ավագ գիտաշխատող	150 138	12	համատեղություն	20	1 801 656
Խաչատրյան Հասմիկ Ռաֆիկի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Քումունց Միեր Սուրենի	Գիտաշխատող	230 167	12	հիմնական	40	2 762 004
Մկրտումյան Անահիտ Մամիկոնի	Ավագ լաբորանտ	156 090	12	հիմնական	40	1 873 080
Սահակյան Նինա Գրիգորի	Ավագ լաբորանտ	156 090	12	հիմնական	40	1 873 080
Խառատյան Մելանյա Հովիկի	Ավագ լաբորանտ	234 135	12	հիմնական	40	2 809 620
Շուքուրյան Մետաքսյա Վաչագանի	Ավագ լաբորանտ	156 090	12	հիմնական	40	1 873 080
Բաժին Կիրառական լեզվաբանություն, բաժնի վարիչ՝ Գ.Գրիգորյան						
Գրիգորյան Գայանե Գրիգորի	Ղեկավար	449 752	12	հիմնական	40	5 397 024
Ղուկասյան Սևակ Վազգենի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Խաչատրյան Օֆելյա Մուշեղի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Հովհաննիսյան Սիրանուշ Գառնիկի	Գիտաշխատող	230 167	12	հիմնական	40	2 762 004
Հովհաննիսյան Հայկանուշ Անուշավանի	Գիտաշխատող	230 167	12	հիմնական	40	2 762 004
Մովսեսյան Դշխուհի Սուրենի	Գիտաշխատող	230 167	12	հիմնական	40	2 762 004
Օհանջանյան Աննա Դիմիտրիի	Ավագ լաբորանտ	156 090	12	հիմնական	40	1 873 080
Բաժին Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն, բաժնի վարիչ՝ Վ. Համբարձումյան						
Համբարձումյան Վազգեն Գուրգենի	Ղեկավար	224 876	12	համատեղություն	20	2 698 512

Սիմոնյան Նեկտար Մամիկոնի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Ավետյան Սարգիս Ռուդիկի	Ավագ գիտաշխատող	150 138	12	համատեղություն	20	1 801 656
Դալալյան Տորք Սամվելի	Ավագ գիտաշխատող	150 138	12	համատեղություն	20	1 801 656
Սարգսյան Մերի Արթուրի	Ավագ գիտաշխատող	150 138	12	համատեղություն	20	1 801 656
Միքայելյան Սոնա Արայի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Մկրտչյան Մկրտիչ Սերժիկի	Կրտսեր գիտաշխատող	179 901	12	հիմնական	40	2 158 812
Բաղրամյան Սեդա Եղիայի	Ավագ լաբորանտ	156 090	12	հիմնական	40	1 873 080
Բաժին Արևմտահայերեն, բաժնի վարիչ՝ Ս. Տիոյան						
Տիոյան Սուսաննա Կարապետի	Ղեկավար	449 752	12	հիմնական	40	5 397 024
Խաչատրյան Արամ Սամվելի	Գիտաշխատող	115 084	12	համատեղություն	20	1 381 008
Ֆալակյան Մանուկ Հարությունի	Գիտաշխատող	115 084	12	համատեղություն	20	1 381 008
Ֆչնկջյան Անի Ավադիսի	Գիտաշխատող	115 084	12	համատեղություն	20	1 381 008
Մարաշլյան Հարութ Գևորգի	Կրտսեր գիտաշխատող	179 901	12	հիմնական	40	2 158 812
Խպլիկյան Զեփյուռ Գևորգի	Կրտսեր գիտաշխատող	89 950	12	համատեղություն	20	1 079 400
Խաչիբաբյան Նաիրա Պարսամի	Ավագ լաբորանտ	156 090	12	հիմնական	40	1 873 080
Քիլէրճեան Պէթթի Մովսէսի	Ավագ լաբորանտ	78 045	12	համատեղություն	20	936 540
Բաժին Բառարանագրություն, բաժնի վարիչ՝ Ա. Գալստյան						
Գալստյան Անահիտ Սերյոժայի	Ղեկավար	449 752	10	հիմնական	40	4 497 520
Հակոբյան Ֆրիդա Արտաշեսի	Գիտաշխատող	230 167	12	հիմնական	40	2 762 004
Մարգարյան Ինգա Աշոտի	Գիտաշխատող	115 084	12	համատեղություն	20	1 381 008
Հովսեփյան Գայանե Կառլենի	Գիտաշխատող	230 167	12	հիմնական	40	2 762 004
Մկրտումյան Արմինե Արամայիսի	Կրտսեր գիտաշխատող	89 950	12	համատեղություն	20	1 079 400
Սարգսյան Նռանե Մանվելի	Կրտսեր գիտաշխատող	179 901	12	հիմնական	40	2 158 812
Բաղրամյան Վանուհի Մկրտչի	Կրտսեր գիտաշխատող	89 950	12	համատեղություն	20	1 079 400
Աշխատավարձային ֆոնդի մնացորդ՝						1049288
Ընդհանուր գումար՝						190 602 444

Կազմակերպության տնօրեն՝ _____ (ստորագրություն) Վիկտոր Լիպարիտի Կատվալյան

Կազմակերպության անձնակազմի կառավարման ստորաբաժանման ղեկավար՝ _____ (ստորագրություն) Մարիետա Հրաչիկի Թադևոսյան (ԱԱՀ)

Կ. Տ.

Հավելված N 6
«29» հունվարի 2024թ.
N1-32/24-I/INSTLING պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆՊԼԱՆ*
«Ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» ծրագրի
(ծրագրի անվանումը)

h/h	Իրականացվելիք միջոցառման			
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	կատարման ժամկետները
1	Ընդհանուր ու համեմատական և կիրառական լեզվաբանության հարցեր	Տե՛ս Աշխատանքի բովանդակությունը, նաև անհատական պլանները	Նյութերի հավաքում	հունվար-մարտ
2	Հայոց լեզվի պատմական զարգացման հարցեր		Ծանոթացում տեսական գրականությանը	
3	Հայ բարբառների ուսումնասիրություն			
4	Արդի արևելահայերենի և արևմտահայերենի ուսումնասիրման և կանոնարկման խնդիրներ		Նյութերի մշակում, քննարկում, պլանավորում	
1	Ընդհանուր ու համեմատական և կիրառական լեզվաբանության հարցեր	Տե՛ս Աշխատանքի բովանդակությունը, նաև անհատական պլանները	Նյութերի հավաքում	կիսամյակի վերջ
			Ծանոթացում տեսական գրականությանը	
2	Հայոց լեզվի պատմական զարգացման հարցեր		Նյութերի մշակում, համակարգում, քննարկում,	
3	Հայ բարբառների ուսումնասիրություն			
4	Արդի արևելահայերենի և արևմտահայերենի ուսումնասիրման և		Շարադրանք	

* *Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել եռամսյակային փուլերով:*

	կանոնարկման խնդիրներ			
1 2 3 4	Ընդհանուր ու համեմատական և կիրառական լեզվաբանության հարցեր Հայոց լեզվի պատմական զարգացման հարցեր Հայ բարբառների ուսումնասիրություն Արդի արևելահայերենի և արևմտահայերենի ուսումնասիրման և կանոնարկման խնդիրներ	Տե՛ս Աշխատանքի բովանդակությունը, նաև անհատական պլանները	Նյութերի հավաքում Ծանոթացում տեսական գրականությանը Նյութերի մշակում, համակարգում, քննարկում, Շարադրանք	հոկտեմբեր
1 2 3 4	Ընդհանուր ու համեմատական և կիրառական լեզվաբանության հարցեր Հայոց լեզվի պատմական զարգացման հարցեր Հայ բարբառների ուսումնասիրություն Արդի արևելահայերենի և արևմտահայերենի ուսումնասիրման և կանոնարկման խնդիրներ	Տե՛ս Աշխատանքի բովանդակությունը, նաև անհատական պլանները	Նյութերի հավաքում Ծանոթացում տեսական գրականությանը Նյութերի մշակում, համակարգում, քննարկում, Շարադրանք	տարեվերջ

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ (Վիկտոր Կատվալյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (Վիկտոր Կատվալյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*